

ՄՐՏԻՍ՝ ՈՐ ԿԸ ՆՈՒԱՂԻ

Ո՛վ բաբախուն կեդրոն հոգւոյս կենսասէր,
Գիտեմ վայրկեան առ վայրկեան
Ձիւ վախճանիս կը մերձեցնես անընդհատ,
Մինչ ես մոլոր կը թափառիմ հեւասպառ
Անըստողին մէջ տարուբեր ու վըհատ:

Բաբախումիդ ունկընդիր՝
Տառապանքիս կ'երգեմ ճիշերն ահաւոր,
Եւ լուսատարի ուղիներէն անցնելուն՝
Լուս, համազարկ կ'առնեմ անհոգի հարուածէն,
Դէպ' իր վախճանն հոգիս նոր քայլ մը կ'առնէ:

Կը փոթորկի հորիզոնն իմ ամպամած,
Երբ ալքերէն մշտամըտունչ ովկեանին, -
Հեղեղաթափ այս կեանքին, -
Հարուած մը նոր դռնակդ ամուր կը բախէ,
Թաւալելով զիս յուզումէ նոր յուզում:

Ա՛հ, համաշափ զարկդ ուժգին
Ճիւ մը կ'ըլլայ ապրտամբ՝ այս աշխարհին,
Ուսկից դժնէ գալարումներ վերահաս
Կ'այլափոխեն դաշնակութիւնն հրաշալուր՝
Ձոր բընութիւնն իբրեւ կանոն քեզ տըւաւ:

Կը սարսափիմ, գեղեցկութիւնն անըստառ,
Խորհելով մի՛ գուցէ ափիս մէջ փշրած
Որպէս բաժակ մը բիւրեղ,
Քայլերս յողողող հուսկ առնեն կանգ հեծելով,
Պատրանքի սա թոյլ ճամբուն վրայ յուսահատ:

Աչքերս ի զո՛ւր երկնքին դէմ անժըպիտ,
Պիտի մընան ըսպասումով գալիքին,
Առանց երբեք գիտնալու՝ ո՛ւր ինկած եմ,
Անապատիս երկայնքին վրայ հողմատար,
Յոյսի թելով մը առկախուած ու թշուառ:

Երբոր անշունչ ալ չըլլեսեմ արձագանգն
Համադաշնակ նըւագիդ,
Երբ մըթագնին հորիզոններն աչքերուս,
Ձարկըդ յետին փրկէ՛ զիս,
Յաւիտենին խորութեանց մէջ լուսավառ:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

ՓԱՐԻՋ, 12-12-1952

ՊԻՔՅԱՅԱ

Մայրիներու հետ և մօտ երկնքին,
Ինչպէս վարդագոյն մի փոքրիկ ածու,
Գարուն կը սփռես ճամբու երկայնքին
Եւ ճամբան կ'երթայ սրտեր ծաղկելու:

Երգեք երգեք կը շրջի արփին
Ամէն տան ուրիշ տենչեր ձօնելով,
Նա քեզ կը գրկէ այնքան սրտագին
Որ կարծես ապրիլդ ըլլար երազով:

Յընդդէմ նման պատկերը յանկարծ
Երկնքին մէջն է հազար երանգով,
Կ'երթայ դէպի ծով, կ'իջնէ այնքան ցած
Որ իր յուզումէն կը նըւաղի ծով:

Բայց երբ կը հնչեն զանգեր դաշնաւոր
Դու լեռն ես արդէն՝ մայրիներու հետ.
Կարծես հանդէս կայ, ճաղիկներու օր,
Կարծես քնարի լար ամէն արահետ:

Փողոցէ փողոց սիրոյ երգն ողբով
Հառաչ կը քաղէ կակաչներու գոյն,
Ու պատուհաններ կու գան իրար քով
Հի՛ն մըտերմութիւն և հի՛ն պատմութիւն:

Եւ յանկարծ կարծես հրդեհ կը ծաղի
Մայրիներու մէջ, տուներուդ վըրայ,
Համբոյրի պահն է երկնի և երկրի,
Համբոյր որ դէմքիդ արեւ կը դառնայ:

Երբոր լեռնէ լեռ կը ծաղկին լոյսեր
Անոնց մէջ կ'ըլլաս դու խոշոր շուշան,
Կը փոխուին կերոն շուրջըդ մայրիներ
Կարծես ըլլայիր գատկական խորան:

Ո՛հ, երանի թէ դու միշտ ըլլայիր,
Միայն արեւուն, միայն աստղերուն,
Աշխարհ չըբերէր հաճոյքներ պատիր
Եւ ոչ ողբաձայն երգեր գալարուն:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՊԻՔՅԱՅԻԱ-ԼԻԲԱՐԱՆ, ՍԵԱՄ. 1951

ՀԱՅ ԳԻՐԵՐՈՒ ԴԱՐՅԻՆ

Ս. ՄԵՍՐՈՊԻՆ

Դարերու խոր հորիզոնին ընդմէջէն,
Դեռ վառ գանկէդ մեզի շողեր կ'երկարին.
Հայ Գիրքերու աստղաշարին մէջ շրջեղ,
Փառքիդ լոյսով՝ մեզ կը ժպտիս գերդ լուսին:

Տառերը մեր՝ բիւրեղացած մեղեդի,
Կը քրքրուան շրթումներուն պէս Հայկի,
Տառերը մեր՝ որպէս սրտեր բոցավառ,
Կեանք կու տան մեզ երակներով ճաճանչի:

Տառերը մեր՝ որպէս կընիք Աստուծոյ,
Սրտիդ վըրայ տաղեց հրեշտակ մ'երկնային,
Ու դու յանկարծ փշրելով սի՛րտըդ - արեւ,
Փըշուրներէն Հուր - Գիր տըւիր մեր երկրին:

Տառերը մեր՝ որպէս աչքեր զըւարթուն,
Պահակ դըրիր սրտին վըրայ հայ ազգին.
Դարերու դէմ, մեր տառերով ամրակուռ,
Պարբայցիք բախտակաւ Հայ Ոգին:

Հայ տառերով՝ որպէս լարեր փաղցրահունչ,
Պըսակեցիր մէջքը Գողթան քննարին,
Որուն վըրայ հայ հանճարի մատերով,
Լուսափրփուր եղանակներ հնչեցին:

Տառերը մեր՝ որպէս ակեր կարկաչուն,
Բացիր փըշոտ դարձեալ մէջ հայրենի,
Որ հայ մտքի բարձունքներուն վըրայ միշտ,
Յաւերժափայլ երգ ու Գարուն բողբոջի:

Լըսէ՛ աշխարհ. ատելաշող ո՛չ մէկ սուր,
Կրնայ փշրել փաղցրաքրքիլ լարերն այս,
Եւ յիշերիմ ո՛չ մէկ սըլաք սայրասուր,
Կրնայ խոցել փայլակնացայտ աչքերն այս:

Թէ արեւներ ըմպեն լիներ փաղցրածուփ,
Բայց չեն կրնար ցամփեցընել ակերն այս.
Կոյր Գիշերներ քէ՛ մըքագնեն ողջ երկինք,
Սիրտըս վըրայ, չեն մըքագնիր աստղերն այս:

Թող գան անցնին հըրասայլեր բագմաշող,
Ո՛հ, կարող չեն ճգնել առոյգ սրտերն այս.
Թող որոտան քննանքներ ուրաքոռ,
Ձի՛ խորտակուիր հանճարակերտ պարիսպն այս:

Որքան ատեն աստղեր քրքիլ ունենան,
Պիտի քրքոյցն անեւ լեզուն հայկական,
Եւ հայ լեզուի ամէն վանկին մէջ անոյշ,
Պիտի քրքոյցն անեւ հոգիդ յաւիտեն:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Կ'ԸՂԶԱՅԻ ՈՐ...

Կ'ըղձայի որ տունը դառնար սիրոյ հնձան.
Մարդիկ իրար ձեռք կարկառած հղբայրական,
Ատելութիւն, մախանք ու քէն ոտքի կոխան,
Եղբայրութիւն համապարփակ, սէր մը բուրհան:

Տաք հոգիներ, բոցիկ սիրտեր, քթթող աչքեր,
Կըրակ մը ջեր, ոտիս, նախանձ իրար բերեր.
Ձեռքի սեղմում, հոգին խօսէր ու չարտասուէր
Եղբայրութեան դարբի մ'ըլլան ամէն անձեր:

Վարդի բուրմանք, հիբիկի ծիր. պատրոյգ անմար.
Հիւզ մը բլբլ տընանկ ու մերկ բայց սիրաշեր.
Ձահերէն կախ լոյսը և ցօլք ու պրիմալ կաթէր
Մոխիրներու անթնկումն ալ աստղը դառնար:

Սերտերու մէջ յաւատ զրգանք ու սէր յորդէր,
Խաբէութիւն, սուտ ու կեղծիք, շրթունք պապունձ
Եղբայրութիւն, հղբայրութիւն յաւատ անանց,
Կարաւանին բոժոժին ձայն դուռներ բանան.
Վարդին թուփին տակ հուզ շորնար Նաժան...

ՎԱՀԱՆ ԱՐՄԼԱՆԵԱՆ-ՊԻՔՅԱՅԻ

Լիզպոմա